

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՍՏԱՆԵԱՅՑ

565

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

1. ՌՈՂԱՆԱՅՑ

ՆՐԵԱՆԻ ԹԵՄ

2. ՆՐԵԱՆԻ ԳԱՂՈՒԹՅ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆԻՔ.

ՐՈՂԱՆԱՅՑԻ ՈՒՆԻՒՆ

ՅԱՆՆԱԿԱՆՈՒՆ ԱՐԱՐԱՆԻ

ՅԱՅՑԱՐԱՐՈՒՆԻՒՆ

ՅԱՆՆԱԿԱՆՈՒՆ ԱՐԱՐԱՆԻ 1895 Թ.

ՍԵՂԱՏԵՄԲԵՐ ԱՄՍԻ.

ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՍԵՂԱՏԵՄԲԵՐԻ Ի ՍՈՒՐԻ
ԱՍՏՈՒԱԾԱԹԻՆԵՆ ԵՒ ՄԻՇՏ ԿՈՅՈՒՆ.

Յորժամ յիշեմ զեւայի ստունկանելն, արտասուեմ: և յորժամ տեսանեմ զպտուղն Մարիամայ, զարձեալ նորոգիմ: Անմահ աղգաւ, անտեսանելի գեղեցկութեամբ, յառաջ քան զյաւիտեանս լոյս ի լուսոյ, յԱստուծոյ հօրէ ծնար՝ Բան և Որդի Աստուծոյ գոյով, առեր մարմին ի Մարիամայ կուսէ, որպէս զի զստեղծեալն ձեռամբ քով սրբով զԱզամ վերստին նորոգեցես: Սուրբ, անմահ, յաւիտեանական անհասանելի, անայայելի, անելելի, ճշմարիտ Որդի Աստուծոյ գոյով յառաջ քան զյաւիտեանս՝ հաճեցար սաղմոնեալ յարգանդի սուրբ կուսին, որպէս զի զնախաստեղծեալ զմարդն ձեռօք քոյովք սրբովք և սակ մեղաց մեռեալ, զարձեալ կենդանացուցես: Բարեհաճութեամբ յառաջագայեցար, բարեհաճութեամբ և կամօք անտեսանելի հօր, վասն որոյ գոչեմք քեզ ամենեքեան, թագաւոր կոչելով՝ օգնական լեր մեր, ծնեցեալդ ի կուսէն և պատեալդ ի խնձարուրս և եղեալդ ի մտեր և կաթնասուն եղեալ ի Մարիամայ, որպէս զի զնախաստեղծն Ազամ սակ մեղաց մեռեալ, զարձեալ կենդանարարեցէ: Գիտութեամբ ճաշակեալք յաստուածային գիտութենէն բոլորեցուք զբաղըրաձայնութիւնս գոհացողութեան, զբաղըր զօրութիւնս աստուածային բանին փառաւորեցուք, բաղըրաձայն վարդապետութեամբ աստուածային շնորհին արժանաւոր գոհութիւնս առաքեցուք, վասն զի երկիր և ծով և ամենայն արարածք տեսանելիք և անտեսանելիք զԱստուծոյ մարդասիրութիւնն օրհնէ և փառաւորէ, վասն եղելոյ ի մեջ բարձրութեան սորա, զի Աստուած գոյով ի մարմնի երևեցաւ և զմայրազոյն խոնարհութիւնն առեալ ծնաւ ի սրբոյ Կուսէն, որպէս զի զվասն ստունկանութեանն մեռեալ զարձեալ նորոգեցէ: Գարձարուք, ժողովուրդք, և եկայք զառ ի Կուսէն ծնեալն ամենեքեան օրհնեցուք, վասն զի փառք և ներազիր գոյով յառաջ քան զյաւիտեանս աստուածութեանն, նմանաբարեալ եղև մեր աղքատութեանս, մեծափայլութն ի իշխանութիւն կերպարան Աստուծոյ գոյով զճառայի առ կերպարան, որ արկանէ զլոյս որպէս հանգրձ, ընդ մարդկան շրջեցաւ որպէս զձուձ. որ ի բրովբէից և ի բիւրուց հրեշտակաց օրհնի՝ յաշխարհի քաղաքափարի, որ յառաջ գոյով կեցուցանէ զամենայն արարածս՝ ի սուրբ Կուսէն ծնաւ, որպէս զի զնախաստեղծն վերստին կենդանարարեցէ: Ես սկիզբն մարդկութեան Քրիստոս Աստուած մեր անսկզբնակից գոյով Աստուծոյ Հօր, որպէս զի վերածնէ առ անսկիզբն սկիզբն աստուածութեանն զան-

կեալն մարդ, և առ զճառայի կերպարանս ի սրբոյ Կուսէն, զի զմեզ վերակոչեցէ ի փառաւորեալ տէրունական ներազիրն: Զգեցաւ զհոգեղէն պատկերն, զի հաղորդս արասցէ երկնային կերպարանն, ի գիրկս սուրբ Կուսին նստաւ, զի զմեզ ընդ աջմէ արասցէ յատուկն իւրոյ Հօր, ի գձուձ մարմնի եղև և ի ձեռն նորուն եղաւ ի գեղեցկանի, զի ժառանգորդս զմեզ ցուցցէ յաւիտեանական կենացն: Ի յարգանդի սուրբ Կուսին անհասանելին պարուրեցաւ, որպէս զի վասն մեղացն ապականեալն Ազամ նորոգեցէ: Զօրութիւն Հօր և կենդանի աղբիւր, Քրիստոս Աստուած մեր, կենսաբեր է խորհուրդս որ և կենդանի ձայնիւ հաւատացաք, անվախճան կենդանութիւն առատաբար պարգեւելով յուսացելոց ի նա, և Հոգւովն շնորհաց լուսաւորելով զպզգս մարդկան, յայս ի կենդանի և ի մշտնջենահոս և ի քաղցրահամ աղբիւր, որք միանգամ հաւատով գոն ծարաւք՝ յազին, Ասան որոյ և միով ձայնիւ Աստուծոյ Բանին ըստ արժանաւորութեանն ըստ իւրաքանչիւր փրկութեան տոթի և պատշաճի՝ երկտասարդաց և ծերոց և մանկաց և կանանց, քանզի ի Մարիամայ յաստուածային աղբիւրէ անձառ աստուածութեանն բոլոր շնորհ և պարգև սուրբ Հոգւոյն: Ի միոյն սուրբ Կուսէ քաղմագին մարգարիտն յառաջագայեցաւ որպէս զի զվասն մեղաց մեռեալ մարդն նախաստեղծ զարձեալ կենդանարարեցէ: Եւ արեգակն արգարութեան ի վերայ երկրի երևեալ և մարդկային ձեռով առ մերս զայ աղգ արժանաւորեցաւ, թաքուցեալ ի թանձրանիւթ մարդկութեանն զփայլատակող ճոռագայթս աստուածութեանն աստուածային հոգւովն լցուցեալ՝ զմեզ և հրեշտակական օրհնութեամբք երգել նմա արժանաւորեցաւ, Բակեփարս ծաղիւք հիւսելովք պսակաբար զանձինս (տունսիրաց և յասիրաց?) պսակել կամելով յանձնաւորելի բուրաստանաց, զգեղեցկապտուղ ծաղիկն Քրիստոսի մատամբք մատուցեալ՝ կթեցուք, քանզի արժանի է աստուածամասն տաճար սուրբ Կուսին այսպիսի պսակաւ փառաւորել, վասն զի լուսաւորական մարգարիտն յառաջագայի, որպէս զի զիջեալն ի խաւարս և ի տոռերս մահու զարձեալ ի մշտահոս լոյսն վերածնէ: Թունիւք աստուածային բանիցն Քրիստոսի վայելեալք ի նորին շնորհս՝ արժանաւորս ինչ օրհնութիւնս առաքեցուք նմա: Զանմահութեան պտուղս խորհրդոցն կթել փութեցուք, զաստուածաղգեստ յարմարութեանն փութեցուք բուրել զհոտ, բանիւք յաստուածային շնորհսն փափկացուք և զժաշահոտութիւն մեղացն ի բաց մերժել փութեցուք, իսկ զանուշահոտութիւն ուղղութեան գործոց զգեցուք: Զգրահոս հաւատոց զմեզ եղեալք և առաքինի վարուք պատմեալք և զտուրք և զանաղոտ զազեստ մարդկութեանն պահեցուք, քանզի սա է առաքինութիւն, խաղաղութեան ընկալից և սիրոյ լծակից և համարնակ ծաղիկ յուսահոտ, և որ զայս հաւատով ճարակեն գառնիք՝ զլուսատեսակ գաւազան երրորդութեանն բոլորն, Եւ մեր, ո՞վ սիրելիք, ի բուրաստանն Փրկչին գիմեալք, աստուածային բանիւք շնորհացն ընդ հրեշտակս զուրախ լեր բերկրեալն սակելով զսուրբ Կուսն օրհնեցուք, զի ի նմանէ նախ ծագեաց մշտնջենահոս լոյսն, որ լուսաւորէ զմեզ բարութեամբն իւրով:

Երբն հանդիպելով սուրբ Կոյսն և տաճար Աստուծոյ պատուական և քաւարան սրբեալ և ոսկեղէն սեղան ողջակ- զաց՝ վասն գերազանցեալ իւրոյ

մարդու թեմանն աստուածային խոսնի առաջադրու-
թեանն և իւր սուրբ շնորհացն և լաղմագատիւ շիշ
ինքեան բերելով, զհաւատարիմ նարդոսն քահա-
նայական խոր զանձառելին զգացողանելով հաճո-
յութիւն Աստուծոյ, որ նա միայն հանդիպի սուրբ
մարմնով և հոգւով: Քուսնս որ ընդ արեւելս հայի
և ի ձեռն մոիցն և ելից զրոյր աշխարհս լուսա-
ւորելով պողպից ձիւթն, յորմէ զմարմնական
շիւղ Տեառն առեալ Սուրբ Հոգին՝ ապրեցոյց զժը-
րեալ աղզ մարդկան: Սա կուսից պարծանք և մարց
ցնծութիւն, հրեշտակապետական զգացումն, ըստ
որում ասացաւ: Աւրախ լեր բերկրեալ, Տէր ընդ
քեզ, և զարձեալ «ի քէն», որպէս զի զմեռեալն
ի ձեռն մեղացն զարձեալ նորոգեցէ: Այոս մնացու-
ցանելով և սաղմագեցեստ լինիլ ի կուսէն հաճե-
ցար: Տէր, յառաջագոյն աւետարանելով առաքեալ
զհրեշտակապետս: Իսկ նա ի վերուստ ի յանձառելի
զօրութեանցն եկեալ առ Մարիամ նախ զԱւրախն
լեր բերկրեալն քարոզեաց նմա և սոյն զարձեալ
ի վերայ էա՞ծ: Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու
ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո: Իսկ
նա խոսովեցաւ և խորհէր ի մօիս թէ որպիսի իցե
ողջոյնս այս: Իսկ ապա վայելարար լուսմն դատար
Այոսն բնարեաց շնորհն, քանզի իմաստուն էր ամե-
նայեի և ոչ նման նմա եղև ի կանայս յամենայն
ազգս: Աչ որպէս առաջին կոյսն և սա միայն գո-
լով ի գրախտին լոյծ և մեղկ խորհրդովն ընկալաւ
զիրառտ օձին և ապականեաց զխորհուրդ սրտին,
որոյ ի ձեռն ամենայն աշխատութիւն եհաս սրբոցն,
այլ այնպիսի սուրբ կոյսն որով և նորա յանցանքն
եկին յուղղութիւն: Եւ ոչ որպէս Սառա աւետա-
րանեալ յաղագս օրդի «իշանալով» յահապէս ծի-
ծաղեցաւ, և կամ որպէս Աբրեհա, որ անձնատուր
կամօք, ընկալաւ զդարգն և յօժարութեամբ
արդոյց ջուր ուղտուց իսանառն: Եւ ոչ որպէս
ամենայն կին մարդ զշնորհ օղջունին անքննարար
ընկալաւ, այլ և պայծառ խորհրդով: Ուստի ար-
գեօք մեզ զայսպիսի բարեբանութիւն բարձեալ բե-
րեալ և որոց արգեօք մեզ զանձուց մարգարիտ բա-
նիդ առաքեալ լինի: Ասիմ զիտեղի, եթէ զինչ է
պարզեղ և ո՞վ է բերող բանից և կամ ո՞վ արգեօք
առաջող: Երկնից եկիր մարդդ կերպարանս ցու-
ցանիս և ջահ լուսոյ փայլատակես: Զայսօրիկ յիս-
քեան տարակուսեալ ասէր սուրբ Այոսն: Բայց հը-
րեշտակն այսպիսի բանիւք զտարակուսանս մտացն
Մարիամու յուժանէր: Հոգի Սուրբ եկեցէ ի քեզ
և զօրութիւն բարձրելոյն հոփանի լիցի քեզ, վասն
որոյ յղացիս և ճնցիս օրդի և կուսեցիս զանուն
նորա Յիսուս: որպէս զի կեցուցէ զաղզս մարդկան
ի մահու մեղացն: Ասէ զարձեալ Այոսն ցհրեշտակն-
Աօղեն միտք իմ որպէս ի ծովու ի բանս քո: զիարդ
եղիցի ինձ այդ, զի այր երկրային ճանաչել ոչ կա-
միմ, վասն զի երկնային փեսային վիճակեցի զիս-
մեալ կամիմ կոյս, ոչ կամիմ մասնել զգատիւ
կուսութեանս: Գարձեալ այսպիսի բանիւք հրեշ-
տակն զսուրբ կոյսն հաստատէր: Գի երկնիւք, Մա-
րիամ, քանզի ոչ եթէ ի զարհուրեցուցանել զքեզ
եկի, այլ հալածել զկարծիս երկնալից: մի երկն-
չիր, Մարիամ, քանզի գտեր շնորհս առ ի Աս-
տուծոյ, մի քննիւք զշնորհս, վասն զի ոչ ասնու
յանն թող տալ օրինաց բնութեանն: Հոգի Սուրբ
եկեցէ ի քեզ, վասն որդ ծնեալն առ ի քէն սուրբ
և Որդի Աստուծոյ է, կերպարանակից և էակից և
մշտնջենաւորակից Հօր, յորում զամենայն յայտ-

նութիւնս ստացեալ ունի Հայր՝ զնկարագրութիւնն
ի գէմս, և ի ձեռն լուսոյն բացափայլին փառք:
Եթէ է խորհուրդս ուսմի ո՞վ Մարիամ, զառ
ի հրեշտակաց այժմ զձաճեալն, ծանեալ, ով Մա-
րիամ, զառ ի խլացեալն ի մարգարեիցն և ի հայ-
րապետացն, և լուսար զոր ոչ երբէք լսել արժանա-
ւորեցան պարբ աստուածազգեստիցն: Գաւիթ և
Նսայի և ամենայն մարգարէքն վասն աւերուական
մարդկութեան յառաջագոյն քարոզէին, այլ զլիարգն
ոչ գիտէին: Բայց դու միայն ո՞վ սուրբ կոյս
զգանգիտացեալն ի նոցանէ խորհուրդ ընկալ և ու-
սիր և մի լինիր մտախօհ, թէ զիարդ լինիցի ինձ
այդ: քանզի որ ի կոյս երկրէ ստեղծ զմարդն, նոյն
ինքն և այժմ արասցէ որպէս և կամի առ ի կեցու-
ցանել զիւր ստեղծուածն:

Կորովայք մեզ այժմ աստուածազգեստ յար-
մարութեան բանիցն մշտահոս լուսով բացափայլին:
Այժմ ինձ բնդ օրինակ սրբոյ կուսին զարմանալ
արժան է և պաշտած, որում վայելչարար հրեշ-
տակն նախ քան զամենայն զԱւրախն լեր բերկ-
րեալ՝ ողջոյն մատուցանէր, վասն զի բնդ նմա կեն-
ցալաւորի ամենայն գանձք շնորհաց, Յամենայն աղ-
ցաց սա միայն և կոյս և ձեռեալ և անձնակ մար-
դոյ սուրբ մարմնով և հոգւով եղև: Յամենայն աղ-
ցաց սա միայն ձեռնիլ արժանաւորեցաւ զԱստուած-
միայն կրեաց զայն, որ զամենայն կրէ բանիւ իւրով:
Եւ ոչ միայն բնդ գեղեցկութիւն սրբոյ Աստուած-
ածինն զարմանալ արժան է, այլ և բնդ առաքի-
նութիւն հոգւոյն: վասն որոյ և Աւրախ լեր բերկր-
եալ, Տէր ընդ քեզ՝ առձայնեցաւ նմա, և զար-
ձեալ նոյն ինքն «Տէր ի քէն»: որպէս զայն, որ
ըստ պատկերին է, կեցուցէ որպէս զողորմած:
Քսակ աստուածային խորհրդոյն պատրաստեաց զինքն
սուրբ Այոսն, յորում մարգարիտն կենաց մարմնով
գոյր ծրարեալ և կրկնեալ, որ և գերաշխարհիկ և
աստուածային փրկութեան եղև ընկալարան:

Եկայք այսուհետև և մեք, ո՞վ սիրելիք, զըստ
զօրութեան պարտն հաստուցուք և ձայնի հրեշ-
տակապետին հետեւելով աղաղակեցուք: Աւրախ
լեր բերկրեալ, Տէր ընդ քեզ: Աչ եթէ երկնային
ինչ փեսայ որ, այլ ինքն իսկ Տէրն, անձնակու-
թեանն Հայրն և կուսութեանն պահապանն և սըր-
բութեան Տէր, անապականութեան ստեղծողն և
ազատութեան տուիչն, փրկութեան հողարարձու
և ճշմարիտ իմաստութեանն կարգաւորիչ և պար-
գեօղ ինքն Տէր ընդ քեզ, վասն զի և ի քեզ աստ-
ուածային շնորհն հանդեալ ի վերայ քո, զի կե-
ցուցէ զաղզս մարդկան որպէս զթած տէր: Աչ
կրբէք Ազամ երկնչի ի ննդաւոր օձէն: վասն զի
եկեալ Տէր մեր զօրութիւն թշնամոյն ցրուեաց,
Աչ կրբէք աղզ մարդկան ի ննդաւորութենէ և
ի մոլորութենէ օձին երկնչի, վասն զի Տէր խորտա-
կեաց զգլուխ փշաղին ի ջուլն մկրտութեան: Աչ
ևս երկնչիմ ես լսել: Հոգ էիր և ի հոգ զարձցիս,
քանզի Տէրն ի մկրտութեան զարդ մեղացն ի բաց
ջնդեաց, Աչ կրբէք լամ և ոչ երբէք սքամ և ոչ
կրբէք ասեմ զարձեալ ի թշուառութիւն ի հար-
կանել իս փշոց, քանզի Տէր մեր զմեզս փշոց
մերոց արմատաքի խլեալ պսակեաց զգլուխ իւր:
Լուծեալ գոն առաջին անէճքն յոր ասէր: Փուշ և
ստատակ բուսուցէ քեզ երկիր, քանզի արմատաքի
խլեցաւ փուշն և չորացաւ: տատակն և ծաղկեաց
ի սրբոյ կուսէն ծառն կենաց և շնորհաց: Աչ եր-
բէք Եւա երկնչի ի նախատանաց երկնաց ծննդեան:

քանզի սուրբ կուսին յանցանքն նորա քննեալ ապականեցան, վասն առ ի նմա ծնանելոյն Աստուծոյ, որպէս զի կեցուցէր զայն զոր ըստ պատկերին արար: Պարիսպ անկործանելի կենաց եղև մեզ սուրբ կոյսն և աղբիւր լուսոյ ի Քրիստոս հաւատացելոց՝ արեւելք իմանալի լուսոյն հանգիպելով: Աւրախ լեր բերկրեալ՝ Տէր ընդ քեզ և ի քէն, որ յաստուածութեան գոյ կատարեալ և ի մարդկութեան, յորում բնակէ ամենայն լրումն աստուածութեանն: Աւրախ լեր բերկրեալ, Տէր ընդ քեզ և ի քէն, որ ընդ աղանդոց Տէրն փառաց՝ ընդ անշաղախիդ, որ սրբէն զամենայն. ընդ զեղեցիկն, որ զարմանալին է զեղեցիկութեամբ քան զամենայն որդիս մարդկան, զի կեցուցէր զոր ըստ պատկերին արար: Կարողունալի աստուածային բանիւք հաւատոյ ուրախանամք, քանզի վարդիւք և շուշանօք և անուշահոտութեան հիւսմամբք անապական գարունն մեր Քրիստոս եկն առ մեզ՝ զգեղեցիկ գրախան կեղեցեաց յաստուածային բուրաստանաց զանգաստանս սրտից մերոյ ելից:

Արդ սուրբ սրտիւ մատիցուք և գտանեմք զոսկեծածանչ հաւատն բացալալեալ և զպտուղս անմահութեան բուրանացեալ ի նմա. քանզի յանապատն Մարիամայ գեղեցեալատուղն ծառ ծաղկեաց, զի որպէս սուրբ և զթա՛մ կեցուցէր զստեղծուածն իւր: Սուրբ և իմաստուն հանգիպէր ըստ ամենայնի ամենեւեցեալի կոյսն, ըստ ամենայնի և յամենայն աղագոց ոչ ոք հանգոյն ի կենացն նման եղև. ոչ որպէս առաջին կոյսն Եւա ի գրախտին զօրով միայն՝ մեղկ խորհրդով մոլորեալ յօձէն և այսպէս ընկալեալ զիտանս, մահ էա՛մ յաշխարհ ի ներքս, և վասն այսորիկ ամենայն տաժանուածն եղև սրբոցն, այլ ի սմա միայն՝ ի սուրբ կուսիս Մարիամայ, տունիկ կենաց ծաղկեաց մեզ. քանզի սա միայն անծանակ հոգւով և մարմնով եղև: Քաջալերող խորհրդով խօսէր ընդ հրեշտակին: Աւստի է ողջոյնս այս և զհարգ եղիցի ինձ այս, կամիս ուսանիլ, իմէ զհարգ մեծալայելուչ իշխանութիւնն նմանաշարար մերում աղքատութեան լինի: Զի՛արդ որ իշխանութիւն զօրութեանց ունի՝ զպատկեր մերոյ գէճութեանս առնու, և որ յառաջ քան զյաւիտանսն է Աստուած՝ հանգործակէ և մատուկ լինել և մարմնանալ, որ արկանէ զլոյս որպէս հանգերն և կեցուցանէ զիւր ստեղծուածն: Տօ՛ւր ինձ զայսպիսի խորհրդոց, ասէր սուրբ Կոյսն, գիտել զանհասութիւն և լինիմ՝ ընդունարան աստուածային խորհրդոյն, հովանի ունելով սրբոյ Հոգւոյն և առնուլ ճշմարտութիւն մարմնոյն ի մարմնոյս և ի շինել իմաստութեանն իւր տուն: Բանն մարմնի եղանի և բնակէ ի մեզ, այսինքն ի նոյն մարմնի, զոր էառ ի մէջ և հոգւով անձին բնականի հոգիացուցանէ. և անայլալելի Աստուած զճառայի կերպարանս ընդունի, որպէս զի հաւատացելոց կարծեսցի որպէս մարդ, իսկ անհաւատից յայտնեսցի որպէս զԱստուած, զի զնախատեղծն դարձեալ նորոգեսցէ: Իւրեմ մարմնոյ ի սրբոյ Կուսէն առեալ Որդւոյն Աստուծոյ, որ յառաջ քան զյաւիտանսն գոյ Աստուած, արժանաւորեաց ծնանիլ և կոչել որդի մարդոյ և տեսանելի գոյ անտեսանելին. և վասն մեր աղքատանալ, որ փարթամն է, և անշարժարկիւն և անմահն կրել որպէս մարդ. քանզի միաւորեցաւ իսկ ի մարմնի և ոչ այլալեցաւ հոգւով. ի մահկանացու մարմնի բովանդակեցաւ անտեսանելին, զի և զնա արասցէ անմահ՝ անմահակից

արարեալ զնա աստուածութեամբն, որպէս զի զստեղծեալն ձեռօք իւրովք սրբովք դարձեալ նորոգեսցէ: Փառք և լոյս եկն յաշխարհ, Քրիստոս Աստուած մեր, փառաւորէ և լուսաւորէ մշտնջենահոս լուսովն, որում ձայն անբերելոյ՝ Հօրն վկայէր: Դա է Որդի իմ՝ և Բան, որ յառաջ քան զյաւիտանսն գոյ, Իսկ Մարիամ բանիւ հրեշտակին ամրանայր, թայց զանունդ Տեառն խորհէր յինքեան, յանհաւասարութիւն մարդկային խորհրդոց հանգիպելով. երբեմն ի բարձրութիւն աստուածութեան վերայնելով զինքն և երբեմն զխոնարհութիւն մարդկութեան մտածելով, Եւ այսպէս մտածութեան կշռորդով երկաթանչիւրան բերելով՝ յայնժամ աստուածային ստուգեալ մօրն արժանաւորի, զի որ զխոնարհութիւն կուսութեանն մարքայէս պահեաց և անմահն՝ և զսրտին որոշարան անխտորելի արար, և փրկի ստեղծուածն զոր ըստ պատկերին արար: Քրիստոս Որդի Աստուծոյ, որ ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, շնորհ եկն յաշխարհ, վասն զի ձեռն շնորհաց կեցողց զմեզ, որ ստեղծ զամենայն, Քրիստոսի յաշխարհ ծնեցելոյ պարեն ամենայն արարածք, փոխ տայ զիտո՛ւ երկայնմտութեանն դահեկան, զի պահանջեսցէ զօթեանս արքայութեանն: Խնդութեամբ սուրբ կոյսն ընդիր վասն առելոյն ի նմանէ մարմնի, զի զանկեալն ընդ մեզօք դարձեալ յարուցէ: Փոխին ի մէջ խորհուրդք չարք, յորժամ սաղմոսեմք քեզ, ո՛վ երկնային և սուրբ Հայր, տեսանելով զլոյս մեծ զոր ետուր մեզ, Կրիստոս Քրիստոս, զծնեցեալն ի սրբոյ Կուսէն և կատարեալ ի ձեռն աստուածութեանն զքրանչիւրան, իսկ զյաղագս մեր կիրսն՝ ի ձեռն իւր մարմնոյն բնկալեալ, Արդ և մէք հոգւով և մարմնով, տաւալին ևս գոյ ի մարմնի՝ զաստուածայինն հրեշտակական օրհնութեամբք բարեմեացող մեզ փութեսցուք առնել, շտապեալ օրինակաւ զաստուածային կարծուածոյն զճշմարտութիւն հաւատոյ ի խորհուրդս մեր սերմանեսցուք. քանզի անհասունելի գոյ խորհուրդն, անտեսանելի, անայլալելի, անպարագրելի՝ լուրութեամբ երկրպագեալ և մտօք սքանչացեալ, Քանզի և ինքն իսկ սուրբ կոյսն ըստ քանացեալ գոյր ընդ յեղանակ խորհրդոյն, զի՛արդ ճաճան լուսոյն ծնունդ կնո՛ղ լինիցի, զգանձ կենդանութեանն զիւրեաւ փարեցուցանէր և զողջոյն հրեշտակապետին զմտաւ աճէր՝ մինչև ի կատարս բերեաց զպտուղ փրկութեանն, զի կեցուցէր ըզմարդն: Ո՛վ զեղեցեալատուղք այսուհետև և զեղեցիկ ծագիւք Քրիստոսի վարդապետութեանն, զպտուղս բարեբանութեանն աստանօր մատուցէք մեզ, աստ ուր ամենայն մաքրութիւն և անուշահոտութիւն է, զաղօթիցն խուսկա սուր խղճիւ մատուցուք Աստուծոյ, Աստ ուր կուսութիւն և զգաստութիւն պարեն զկենսաբեր ողկոյն պտղաբերելով, աստ ուր շաղկապ յաղթարեր զօրութեանն և զգանձ սիրոյ Բարեբանութեանն մեզ, Աստ ուր սուրբ Երրորդութեանն խորհուրդ ի հրեշտակապետէն յայտնեցաւ սուրբ Կուսին ըստ աւետարանին: Հագի Սուրբ եկեցեաց ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի քեզ, զի սուրբ, որ ի քէն գոյ ծնեալ, Որդի Աստուծոյ է, որում փառք և երկրպագութիւն յաւիտենից յաւիտենաւ: